ՀՆՈՑ ԵՒ ՆՈՐՈՑ

(Հաղորդեց Մ. Բարխուդարեան)

III

ՀԱՑՈՑ ԱԶԳԻՆ ՏՈՒԱԾ՝ ԱԼԻԻ ՀՐՈՎԱՐՏԱԿԸ.

1852 թ. «Կաւկաղ» լրագրի 75 համարում տպագրած է Ալիի՝ Հայերին տուած հրովարտակի ռուսերէն թարգմանութիւնը, որին կցած է հետեւեալ ծանօթութիւնը. «Ցեղիս հայ վաճառականներից մէկը՝ Շերմազանեանը (Գալուստ?), մի քանի տարի առաջ Պարսկաստանում լինելով, իմանում է, որ Արդաբիլում՝ տեղական մզկիթներից մէկում, պահւում է այն հրովարտակը, որ տուել է Հայերին Ալին՝ չորրորդ խալիֆը, Մահմեդի ազգականը։ Շերմազանեանցի ասելով, նա քիչ ջանք չէ թափել, մինչև որ կարողացել է հանել պատճէն, որի թարգմանութիւնը կետեղում ենք այստեղ։ Հրովարտակը գրուած է քուֆի տառերով, Խորազվալ (?) անապատում, Սաֆար ամսին, հիջրայի 40 թուականին, Վալազի որդու Աթաբի որդի մի ոմն Համամի ձեռքով՝ Ալիի, Աբու-Թալէբի՝ «քաջերի գլխաւորի, սրբերի սուրբի և Աստուծոյ առիւծի—յաւիտենական յաղթողի» [1]) հրամանով, ինչպէս ասած է հրովարտակի մէջ»։

Ահաւասիկ այդ հրովարտակի հայերէն թարգմանութիւնը որ մենք առնում ենք ռուսերէնից։

«Ցանուն Աստուծոյ Բարերարի և Հոգանաւորի. Թո՛ղ նորա ողորմութիւնը միշտ անպակաս լինի մեզանից։

Ցիեզերքի Արարչին գոհութիւն և փառաբանութիւն և արժանավայել երկրպագութիւն մեր մեծ մարգարէին բարե-

---

[1]) Այս բոլոր խօսքերը չկան հրովարտակի մէջ։ Մ. Բ.

բարոյ Մահմէդին և Նորա բոլոր սրբազան տան։ Հայ ժողովրդեան մի քանի պատուաւոր, լուսաւորութեամբ և հոչակաւորութեամբ յայտնի անձինք, ինչպէս՝ Յակոբ Սէյիդ, Արդմուխ և Սահակի որդին, Աբրահամ քահանան, Եսայի եպիսկոպոսը և ուրիշ շատերը, թուով մինչև քառասուն մարդ, որոնք աջակցութիւն էին ցոյց տուել ամրոցներն ու սահմանները ուղարկած մեր մարդուն, խնդրեցին մեզանից այս հրովարտակը շնորհելու։ Ի պատիւ որոյ՝ նոցա ներկայութեամբ, հրամայում ենք ինչպէս մեր կողմից, այնպէս և Իսլամի բոլոր սերունդի կողմից՝ արևելքից մինչև արևմուտք, մեր հովանաւորութեան ներքոյ բոլոր գտնուողներին, քանի որ ես կենդանի եմ և իմ մահից յետոյ, քանի որ իսլամականութիւնը գոյութիւն կունենայ, բոլոր թագաւորները, տիրապետող իշխանները և բոլոր իշխանութիւն ունեցողները պարտական են սրբութեամբ կատարելու այս մեր որոշումը, քանի որ ծովերը կը պահպանեն իրենց թացութիւնը, երկնքից անձրև կը գայ, երկիրը բոյսեր կարտադրէ, աստղերը կը լուսաւորեն և արեգակը կը ջերմացնէ, թող ոչ ոք չյանդգնի խախտել և փոփոխել իմ պատուէրը ոչ մի որ և է բան աւելացնելով, ոչ պակսեցնելով և ոչ էլ փոփոխութիւն մտցնելով Նորա մէջ։ Մի որևիցէ բան աւելացնողը կը սաստկացնէ իւր պատիժը և կը պակսեցնէ մեր ներողամտութիւնը, իսկ ով որ կփորձէ փոխել մեր կարգադրութիւնը, նա չարագործ, անհաւատարիմ հպատակ, Աստուծոյ պատուիրանը խախտող կհամարուի և Նորա ցասման պատճառը կլինի։ Որովհետև այս հրամանը Սէյիդի, եպիսկոպոսի և ուրիշ նշանաւորագոյն քաղաքացիների, որոնց անունները վերը յիշուած են, խնդիրքով գրուած է բոլոր քրիստոնեաների համար, որոնք մեր հովանաւորութեան ներքոյ են, ուստի թող Նորա զօրութեամբ միշտ ապահովութիւն և մտերմութիւն լինի բոլոր քրիստոնեաների և մահմեդականների մէջ։ Այդ ես կամենում եմ և սիրով անխախտ կը պահեմ այս որոշումը, քանի որ քրիստոնեաները իմ հպատակութեան մէջ կլինեն և չեն արհամարհի իմ հպատակների կրօնը։ Այն քրիստոնեաները, որոնք հաւատարիմ կը լինեն իրենց խօսքին, թող հաւասար լինեն մահմեդականներին և ուղղահաւատներին։ Այսպէս քրիստոնեաների խնդիրքով մահմեդական աւագանիի և իմ ամենազլխաւոր պաշտօնեաներիս ժողովում, տալիս եմ այս հրամանը և թո՛ղ հաստատապէս կատարեն թէ Նորա և թէ Նոցա սերունդները։

Եթէ թագաւորներից կամ տիրապետող իշխաններից մէկը նեղէ Հայերին, թող նեղիչներին նոքա ցոյց տան այս պահպանողական հրովարտակը։ Թագաւորները և մահմեդականները պարտաւոր են ամեն բան մեր հրամանով կատարելու. իրենց բոլոր գործողութիւններում պարտաւոր են յարմարուել մեր կամքին, ամեն կերպ աշխատել արմատախիլ անելու ամենափոքր անգամ անհամաձայնութիւնը, չնեղել քրիստոնեաներին և չարհամարհել նոցա։ Եւ, ես կամենում եմ, որ տարաձայնութիւն չլինի քրիստոնեաների և իմ հզօր ու փառապանծ ժողովրդի մէջ։ Եթէ մէկը մի որևիցէ բանով խախտէ քրիստոնեաների համար իմ գրածը, որոնք արժանացել են իմ ողորմութեանս, թող նա լինի Աստուծոյ կամքը չկատարելու պատճառը, Որ ներշնչել է ինձ բարերարել քրիստոնեաներին, ազատել նոցա ամեն տեսակ հալածանքներից և նեղութիւններից. այս դիտաւորութեամբ շնորհում եմ նոցա այն պահպանողական հրովարտակը, որի մէջ՝ քրիստոնեաների և իմ մերձաւորների խնդիրքի համաձայն, ուխտ արի յանուն Աստուծոյ, մարգարէների և բոլոր սրբերի՝ առաջնից մինչև վերջինը, համաձայն Աստուածային պատուիրանին, որ հրեշտակի և սուրբ մարգարէի միջոցով հասել է մեզ և յորդորում է հնազանդուել օրէնքներին և կատարել պարտականութիւնները, նմանապէս և անխախտ պահել Աստուծոյ ներշնչած այս կարգադրութիւնը, որ իմ հպատակութեան մէջ գտնուող քրիստոնեաներին, որոնք իմ ժողովուրդն են կազմում, ես պարտական եմ բարերարել և ազատել նոցա ամեն տեսակ դժբաղդութիւնից և հալածանքից, որի համար ինչպէս ես, այնպէս էլ աշխարհիս երեսին տարածուած իմ ժողովուրդը կարժանանայ պարգևի։ Հրամայում եմ, որ իշխանները քրիստոնեաներից հարկ վերցնեն իմ որոշմամբ, չվիրաւորեն, չհալածեն նոցա, չստիպեն նոցանից և ոչ ոքի կեանքի եղանակը փոխելու՝ ոչ կրօնաւորին, ոչ քրիստոնեային, ոչ ճգնաւորին, չարգելեն քարոզիչներին իրենց հաւատը տարածել, քրիստոնեաների բնակարաններն ու զիւղերը չոչնչացնեն, չյափշտակեն նոցա ինչքը և եկեղեցիներ կառուցանելու ժամանակ չարգելեն նոցա զանգակներ ունենալու։

Իմ այս կարգադրութիւնը կամ հրամանը խախտողը՝ խախտելով Աստուածային պատուիրանը, յաւիտենական պատժի է արժանի՝ լինի նա թագաւոր կամ մի ուրիշ ոք. ոչ միայն նա չէ կարող քրիստոնեաներին բռնութեամբ մահմեդական դարձ-

ել, այլ և ոչ մի վիճաբանութիւն չպիտի անէ նոցա հետ կրօնի մասին. բայց ամենքը պարտաւոր են նոցա հետ խաղաղ ապրել և կարիք եղած դէպքում պաշտպանել նոցա, իրենց հովանաւորութիւնը դոյց տալ նոցա և, ինչ տեղ էլ որ նոքա հաստատուելու լինեն, աշխատել պաշտպանելու նոցա ամեն տեսակ դժբաղդութիւնից, որ կարող է պատահել նոցա։

Եթէ Հայերը եկեղեցիներ և վանքեր շինելու և կամ քաղաքների և իրենց տների բարեկարգութեան համար որև է օժանդակութեան կարիք ունենան, մահմեդականները պարտաւոր են նոցա օգնելու՝ բաժին հանելով նոցա համար իրենց անտերացած (?) կայքի մի մասը, և այն՝ առանց յետ ստանալու, որպէս ողորմութիւն, և պարտաւոր են բարի խորհուրդներ տալու նոցա իրենց ամեն մի ձեռնարկութեան ժամանակ, որովհետև այդ հաճոյ է Աստուծուն և նորա մարգարէին։ Ով որ խախտէ կամ փոփոխէ այս հրամանը, անհաւատարիմ կհամարուի և դաւաճան Աստուծոյ մարգարէին, կըպրկուի նորա հովանաւորութիւնից և յանցաւորին կը պատժէ մարգարէն։ Մի խօսքով՝ ով որ չի հպատակուիլ այս պատուիրանին, նա անհնազանդ կլինի սրբերի սուրբ Ալի՝ ամենափառաւոր Աբուլ-Թալէբի կամքին, որի հրամանը մուսուլմանները պարտաւոր են կատարելու, սիրայօժար ամենքին բարութիւն և ողորմութիւն անելով, քանի որ աշխարհս կանգուն է և մինչև ի կատարածն աշխարհի, ի փառս Արարչին տիեզերքի։